

- Սուրբ աւրինաց հակառակիս,
Բարիատեաց չարասիրիս,
Եմք անաղաւթք հեղգ ի բարիս,
Անապաշաւ խըղճամբտիս,
- 435 Ժոյլ և պղերգ յամեն բարիս,
Դ՛ անկարեկից յայլոց կարիս,
Յիշոցնատու ոչինչ բանիս,
Դ՛ երգըմնազանց ևս ի սնոտիս,
Բախիլ յաչաղ յայլոց բարիս
- 440 Եւ նախանձոտ առ ընկերիս,
Քինախընդիր չարաճըճիս
Եւ բամբասող միշտ ըզբարիս,
Վասն այսորիկ տաժանելիս
Եւ տառապեալ եմք յաշխարհիս
- 445 Մեր խաւարած եկեղեցիս,
Ազգս ցրուած յամեն տեղիս,
Բայց գոհութիւն մարդասիրիս,
Որ ապրեցաք ի յայս վշտիս,
Զմեզ ոչ թողեալ ի նեղութիւնս
- 450 Այլ փոյթ եհան յանդորրութիւնս
Տուք աւրհնութիւն Հաւրն անեղին
Եւ միածնի Բանի Սորինս